ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 05 >> հոկտեմբերի 2016թ. N 88

ք. Արմավիր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 159-րդ, 161-րդ, 164-րդ և 169-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման N 1 հավելվածի 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հարությունյանի 2016 թվականի սեպտեմբերի 29-ի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հարությունյանին տրամադրել 2015-2016 աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները՝ 2016 թվականի հոկտեմբերի 10-ից նոյեմբերի 10-ը ներառյալ՝ 24 աշխատանքային (20 նվազագույն, 4 լրացուցիչ) օր տևողությամբ:
2. Հովհաննես Հարությունյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ Վարդան Ալեքսանյանին:
3. Հովհաննես Հարությունյանին աշխատանքի մեջ համարել 2016 թվականի նոյեմբերի 11-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հոկտեմբերի 5-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ